**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**«24» օգոստոս 2022թ.**
**N 3915 - Ա հրամանի**

**ԾՐԱԳԻՐ**

**ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 4-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2022թ.-ից կրկնողաբար , ք. Երևան

(«Շենգավիթ» ԲԿ, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ)

Հայ օգնության ֆոնդ

| Թեմա | Նկարագիր | Տևողություն | Պատասխանատու | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. Բարձր ռիսկի հղիության վարման ժամանակակից մոտեցումները (սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ, մարսողական համակարգի հիվանդություններ, երիկամային ախտաբանություն,<br><br>էնդոկրինհամակարգի հիվանդություններ, կենտրոնական նյարդային | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>09:00-15:00 | Արմեն Բլբուլյան<br>Ռուսուդան Վարդանյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br><br>• Գնահատել հղիության ընթացքը, հավանական ռիսկերը, վարել, ճիշտ ուղորդել ռիսկի խմբի հղիներին՝ համապատասխան ժամանակակից ուղեցույցների<br>• Ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող վիճակները գինեկոլոգիայում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համակարգի հիվանդություններ և հղիություն, հղիության<br><br>պրե- և ինտրանատալ ռիսկի գործոնների գնահատում):<br>Առնվազն 1 նման հղիի վարում դասընթացի ընթացքում<br><br>2. Ծննդաբերության վարման ժամանակակից մոտեցումները (ծննդաբերական գործունեության անոմալիաների բուժումը, վաղաժամ ծննդաբերության վարման տակտիկան, պրեէկլամպսիա և ծննդաբերություն, արյունահոսություններ ծննդաբերության և հետծննդյան շրջանում, վիրաբուժական ծննդալուծում)<br><br>3. Սեռական ճանապարհով փոխանցվող սեռավարակների ախտորոշում և բուժման ժամանակակից մեթոդները | <br><br><br><br><br>• Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում<br><br><br>• Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | <br><br><br><br><br>30 ժամ<br>09:00-15:00<br><br><br><br>6 ժամ<br>09:00-15:00 | <br><br><br><br><br>Արմեն Բլբուլյան<br>Ռուստամ Վարդանյան<br><br><br><br>Արմեն Բլբուլյան<br>Ռուստամ Վարդանյան | • Տիրապետել հակաբեղմնավորիչ դեղորայքի կիրառման սխեմաներին, սեռավարակների բուժման և կանխարգելման, վերարտադրողական առողջության կարևոր մոտեցումներին<br>• Վարել անհարթ ընթացքով ծննդաբերություններ՝ հստակ գնահատելով վիրահատական ճանապարհով ծննդալուծման անհրաժեշտությունը<br>• Կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն հղիի, ծննդկանի և նորածնի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. Արգանդի պարանոցի նախաքաղցկեղային հիվանդությունների և քաղցկեղի ախտորոշման, բուժման և կանխարգելման ժամանակակից մեթոդները: Կրծքագեղձի նախաուռուցքային հիվանդությունների և ուռուցքների ախտորոշման, բուժման և կանխարգելման ժամանակակից մեթոդները | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 6 ժամ<br>09:00-15:00 | Արմեն Բլբուլյան<br>Ռուսուդան Վարդանյան | |
| 5.Անպտղության ախտորոշման և բուժման ժամանակակից մեթոդներ: Արդի հակաբեղմնավորիչ մեթոդներ, հորմոնոթերապիան կնոջ վերարտադրողական և հետմենոպաուզալ տարիքում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>09:00-15:00 | Արմեն Բլբուլյան<br>Ռուսուդան Վարդանյան | |
| 6.Գինեկոլոգիայում վիրաբուժական օգնության ժամանակակից մոտեցումները | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և | 24 ժամ<br>09:00-15:00 | Աշոտ Սիրունյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| արգանդի մարմնի հիպերպլաստիկ պրոցեսների, արգանդի պարանոցի հիվանդությունների, առնվազն 3 տարբեր մանկաբարձագինեկոլոգիական վիրահատությունների մասնակցություն՝ 1-ին կամ 2-րդ ասիստենտի կարգավիճակով | բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | | | |
| Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ) | Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում | 12 ժամ | Աննա Շիրինյան | |
| Դասախոսություններ ՀԳԲԳ-ում | • Գերիատրիայի հիմունքները: Ծերացումը որպես 21-րդ դարի հիմնախնդիր<br>• Բժշկութուն և իրավունք<br>• Ցավի կառավարում<br>• Ալերգիկ հիվանդություններ<br>• Արյունաբանություն | 6 ժամ | Արթուր Թորոսյան<br>Նարինե Մովսիսյան<br>Վիոլետա Զոփունյան<br>Արմինե Վիլենովնա<br>Երվանդ Հակոբյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Համակարգչային գրագիտության դասընթացներ[1] ՀԳԲԳ-ում<br><br>Վերապատրաստման արդյունքների ամփոփում[2] | MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց<br><br>Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 24 ժամ<br><br>10:00-12:00 | Համբարձում Սիմոնյան Առնո Հովհաննիսյան | |

[1]Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ:

[2]Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները պետք է ներկայացնեն կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցները կարող են օգտվել Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված չէ (09:00-15:00) 6 ժամվա մեջ

Թիրախային լսարան՝ մանկաբարձ-գինեկոլոգներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10-12 հոգի: